

լիքներ խճողուած են իրարու մօտ. մին կարծես նսեմացնելով միւսին փայլը, եւ այն՝ այնպիսի դիրքի մը վրայ... Արդէն Միքէլանճելոյ իսկ վախցած՝ շուէր Ծիրենցէ առաւ, երբ առաջին անգամ լսեց Յուլիոս Բ պապէն (1506) այդ մատրան առաստաղը նկարելու առաջարկը։ Աւելորդ անցան Պապին խոստումնալից կամ սպառնադին կոչերը. Միքէլանճելոյ Պոլոնիայի մէջ միայն ներկայացաւ Պապին, ու հոն հաշտուեցան։ 1508ին նորէն Հռոմ կանչուելով, թէպէտ ամէն քար շարժեց վրայէն նետելու համար այդ ծանրութիւնը - Վարպետը կը կարծէր թէ Յուլիոս Բ իրեն կ'ընէր այդ առաջարկը դրդուած իր հակառակորդներէն - վերջապէս ստիպուեցաւ տեղիք տալ։

Թէպէտ բոնի ստանձնած՝ սակայն շուտով վառեցաւ իր մէջ խանդը. նկարելի տեղին ընդարձակութիւնը, որ նախ յոգնութեան մը տաղտուկը կը ներկայացնէր իրեն, յանկարծ փոխուեցաւ. այդչափ ընդարձակութեան մէջ պիտի կարենար ուղածին պէս դասաւորել իր մտքին տիպարները. ու Վարպետը որ գործին ծանրութեան համար իբր օգնական կանչեր էր Փլորենտացի ծանօթ վրձիններ, մեկուսացուց զանոնք անձամբ նուիրուելու այդ գործին։ 1508ի դարունէն սկսելով, մինչեւ 1512 Հոկտեմբեր 31, չորս տարիներու տաժանագին աշխատութեամբ, պատկերացուց «Քրիստոսի գալուստը պատրաստող հին աշխարհի քերթուածը». ստեղծումը, առաջին մեղքը, ջրհեղեղը, իրենց յարակից պատմութիւններով, յետոյ փրկագործութեան գուշակումը յանձին մարդարէներու եւ սիրելիաներու, Դաւթի ցեղէն Մեսիայի սպասումը՝ ներկայացած անոր նախնիքներու շարքին մէջ։

Բոլոր այս պատկերները որոնք կը ներկայացնէին մարդկութեան ակնկալութիւնը Քրիստոսի գալուստեան՝ պիտի պատկերէին

30 տարի յետոյ (1534-1541) բոլոր մարդարէութիւններու լրումով, Վերջին դատաստանով։ Միքէլանճելոյ համոզեց Պօղոս Գ պապը, որ ջնջել տայ դիմացի որմին վրայի Փերուճինոյի երեք նկարները, փակէ պատուհանները, ու այդ որմին վրայ թանձրացուց իր մտքին եւ հոգւոյն յղացումին այդ գլուխ գործոցը։ Երբ 1541ին կատարուեցաւ մատրան բացումը հիացողներու խումբին մէջ կար նաեւ Ռափայէլ Սանցիոյ՝ շնորհքի Վարպետը։ Միքէլանճելոյ 66 տարեկան էր երբ աւարտեց Վերջին դատաստանը։ Այս ամէնը քրիստոնեաներու մտքին ծանօթ գաղափարներ ու անձնաւորութիւններ էին. նորութիւնը՝ բացի սքանչելի շարադրութենէ եւ մեծութենէ որ պատկառելի կ'ընէ, կը կայանայ այդ ոգւոյն ու ձեւին մէջ գորանոնք ընդունեցան մեծ Վարպետէն։

Եթէ այսօր այդ գործը չի ներկայանար մեզի իր նախկին բոլոր չքեղութեան մէջ վասն զի խունկի եւ մոմերու ծուխը ըստ ըստ են անկէ մասեր մը, բայց այնուհանդերձ կը մնայ մարդկային արտագրութեան հրաշակերտ մը։

Կ'արժէ հոս շեշտել քրիստոնեայ այդ գլուխ գործոցները կերտողներու եւ անոնց ներշնչողներու միակ գերագոյն գաղափարականը. Քրիստոս՝ որ սպասուած է, Քրիստոս՝ որ անձամբ երկրիս վրայ կատարած է իր առաքելութիւնը, Քրիստոս՝ որ պիտի դատէ, եւ Քրիստոս որ այսօր կենդանի է դեռ իր Եկեղեցւոյն մէջ եւ կը գործէ իր փոխանորդին ու իր պաշտօնաներու միջոցով ու անոնցմէ անբաժան. այդ բոլորը, անցեալն ու ապագան, մըթնոլորտն է որուն մէջ կը գործէ Եկեղեցին։

Այդ մթնոլորտին մէջն է որ ներկայացաւ Հայ Եկեղեցին ալ իր Հայրապետով ու եկեղեցական բոլոր նուիրապետութեամբ, իրեն եկեղանի մէկ մասը այդ ամբողջութեան։

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ

Ս Ե Ի Ա Ն
Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն Բ Տ Ա Ր Ի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հ. Թ. ԹՈՄԱՃԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆԻ

ՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԲ

Յ. ՓԱՓԻՆԻ

ԶԱՐԶԱՐԱՆՔԻ
Վ ԿԱՆԵՐԸ

Դիմել

Imprimerie Arménienne

VENISE

ԳՐԱԿԱՆ ՅՈՒՓԵՐ

«ԳՐԱԿԱՆ ՅՈՒՓԵՐ»-ու շարքը — որու գեռ առաջին ութը հատորները լոյս տեսած են,

Ա Լ Ի Շ Ա Ն

ՎԱՐՈՒԺԱՆ

ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԴՈՒՐԵԱՆ

ՋԱՐԴԱՐԵԱՆ

պիտի կազմէ ամէնէն ճոխ եւ ամէնէն կատարեալ մատենադարանը մեր տոհմային նոր Գրականութեան:

Ամէն Հայ պէտք է սիրով ողջունէ Մխիթարեան Միաբանութեան զոհարեր ձեռնարկը կազմուած այս զերզնահատելի մեծ եւ կարեւոր ձեռնարկը, որ այլեւս ամենամեծ դիւրութիւնը պիտի տայ Հայ աշակերտութեան ու ամբողջ ընթերցասէր հասարակութեան՝ աժանադին հատորներու մէջ ճանչնալ մեր Արեւելահայ թէ Արեւմտահայ սիրուած ու փնտռուած բոլոր հեղինակները՝ Ալիշանէն ու Արովեանէն մինչեւ Վարուժան, մինչեւ Տէրեան եւ մինչեւ նորադոյն ընտիր դէմքերը, քերթող ու արձակագիր, իրենց զբաղան բոլոր սեռերու ընտիր նմոյշներով:

Մէն մի հատոր — եւրոպական մեծ աղբերու նոյնօրինակ ձեռնարկներու ոճը որդեգրած — պատրաստուած է հեղինակներու կեանքին ու գործին խնամոտ ուսումնասիրութեամբ, վերլուծումով եւ կարեւոր դատուած ծանօթագրութիւններով:

Գործին յաջողութեան եւ արժէքի երաշխիքը կը կազմէ Հրատարակիչ Յանձնախումբը՝ կազմուած ընդհանրապէս Գրականութեան նուիրուող Հայրերէ, որոնք միանգամայն ունին հմտութիւն եւ երկարամեայ փորձը նոյն մասնաճիւղի դասաւանդութեան:

Մէն մի հատոր շուրջ 100 էջ, մաքուր թուղթի վրայ ընտիր տպագրութիւն՝ ճոխացած հեղինակին պատկերով: